# Աուդիտորական ծառայության մատուցման պայմանագիր N 24

*ք. Երևան* *27 մայիսի 2020թ.*

«Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ, այսուհետ՝ «*Պատվիրատու*», ի դեմս տնօրեն Վ. Պետրոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ, այսուհետ՝ «*Կատարող*», ի դեմս տնօրեն Մ. Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության և աուդիտորական գործունեության թիվ ԱԾ - 048 լիցենզիայի՝ տրված 02.08.2006թ. հիման վրա, մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է կատարել Պատվիրատուի ՖՀՄՍ-ով կազմված 2019թ. ֆինանսական հաշվետվությունների՝ այդ թվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության, սեփական կապիտալի և դրամական հոսքերի մասին հաշվետվությունների աուդիտորական ուսումնասիրություն (Աուդիտ)՝ աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան:

## 2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1 Կատարողն իրավունք ունի՝

2.1.1. Պատվիրատուից պահանջել Պատվիրատուի հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերի, ֆինանսական հաշվետվությունների կրկնօրինակներ, ինչպես նաև այլ տեղեկատվություն, որոնք անհրաժեշտ են առաջադրանքի որակյալ և լրիվ կատարման համար: Կատարողի կողմից աշխատանքները կատարվում են օգտագործելով Պատվիրատուի սկզբնական փաստաթղթերը: Կատարողը պատասխանատվություն չի կրում ներկայացված սկզբնական փաստաթղթերի և տեղեկատվության հավաստիության համար:

2.1.2. Պատվիրատուից պահանջելու կազմել և աշխատանքներից մեկ օր առաջ տրամադրել առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների ցանկը: Նման ցանկ չներկայացնելու դեպքում կողմերը առաջնորդվում են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմերով:

2.1.3. Աուդիտորական ուսումնասիրության ընթացքում Կատարողն ինքնուրույն է որոշում ստուգման ձևն ու մեթոդները՝ ելնելով աուդիտի ստանդարտներից:

2.1.4. Աուդիտորական ծառայության իրականացման աշխատանքներում ներգրավել այլ աուդիտորների, անկախ փորձագետների, մասնագետների (ներառյալ Պատվիրատուի հաշվապահական անձնակազմը): Աուդիտորական ծառայությունների իրականացման աշխատանքներում նշված անձանց ներգրավման կարգը նախատեսվում է աուդիտի ստանդարտներով:

2.1.5. Այն դեպքում, երբ Պատվիրատուն չի տրամադրում աուդիտն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթեր և չի ապահովում անհրաժեշտ պայմաններ սույն պայմանագրի 2.4.1 կետով նախատեսված կարգով, կամ Պատվիրատուի կողմից մինչև աշխատանքների ավարտը առաջարկվում է դադարեցնել Պայմանագրի գործողությունը, Կատարողն իրավունք ունի դադարեցնել աշխատանքները՝ չվերադարձնելով նախատեսված կանխավճարային գումարը:

2.2. Կատարողը պարտավոր է՝

2.2.1. Ծառայությունը մատուցել նշված ժամկետներում և անհրաժեշտ մակարդակով: Կատարողն իրավունք ունի կատարված Աշխատանքի արդյունքը հանձնել Պատվիրատուին Ժամկետից շուտ:

2.2.2. Չհրապարակել և առանց Պատվիրատուի համաձայնության երրորդ կողմի չտրամադրել աշխատանքների ընթացքում ստացած առևտրային գաղտնիք ներկայացնող տեղեկատվությունը՝ բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

2.2.3. Աշխատանքի արդյունքի ստեղծումն ավարտել և այն հանձնել Պատվիրատուին ոչ ուշ, քան *2020 թվականի հունիսի 19-ը*:

2.2.4. Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկություններ գործող օրենսդրության, կողմերի իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև կողմերի փոխհարաբերությունները կարգավորող այլ նորմատիվ ակտերի վերաբերյալ:

2.3 <u>Պատվիրատուն իրավունք ունի՝</u>

2.3.1 Կատարողից ստանալու տեղեկություններ գործող օրենսդրության, կողմերի իրավունքների ու պարտականությունների, ինչպես նաև կողմերի փոխհարաբերությունները կարգավորող այլ նորմատիվ ակտերի վերաբերյալ:

2.3.2 Սահմանել հրապարակման ոչ ենթակա տեղեկատվության ծավալը:

2.3.3 Կատարողից պահանջելու ներկայացնել պարզաբանումներ աշխատանքների կատարման մեթոդների վերաբերյալ:

2.3.4 Աշխատանքի արդյունքը ստեղծելուց հետո հիմնավոր առարկություններ ունենալու դեպքում Աշխատանքի արդյունքը ստանալուց հետո երկու օրվա ընթացքում այն հետ վերադարձնել Կատարողին՝ պահանջելով լրամշակել այն ըստ սույն Պայմանագրի պահանջների: Այս դեպքում ճշտումներն իրականացվում են փոխադարձ համաձայնությամբ սահմանված ժամկետներում՝ առանց Պատվիրատուի կողմից լրացուցիչ հատուցման:

2.3.5 Լիազորված մարմնին կամ մասնագիտացված կառույցին տեղեկացնել աուդիտ իրականացնող անձի կողմից աուդիտորական գործունեության մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջների խախտման մասին:

2.4 <u>Պատվիրատուն պարտավոր է՝</u>

2.4.1 Պայմաններ ստեղծել աուդիտը ժամանակին և որակով անցկացնելու համար՝ ներառյալ աշխատանքային տեղերը, հաշվիչ և բազմացնող տեխնիկան և այլն: Այդ նպատակի համար Պատվիրատուն տպված կամ համակարգչային տարբերակներով Կատարողին ժամանակին և պատշաճորեն կներկայացնի անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը (վավերացված պատճենները), կտրամադրի տեղեկություններ Պատվիրատուի գործունեության, տնտեսական, ֆինանսական, իրավաբանական (օրենսդրական), հաշվապահական ոլորտների վերաբերյալ, աուդիտորական նախորդ առաքելությունների հաշվետվությունները, Ղեկավարությանն ուղղված նամակները, պետական մարմինների հաշվետվությունները և եզրակացությունները և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնց արժանահավատության համար օրենսդրությամբ սահմանված կարգով կրում է պատասխանատվություն: Սույն կետի պահանջները հանդիսանում են Պայմանագրի էական պահանջներ:

2.4.2 Աշխատանքի արդյունքը ստեղծելուց հետո ընդունել այն և ժամանակին վճարել դրա համար:

2.4.3 Կատարողի պահանջով ներկայացնել բանավոր և գրավոր համապատասխան պարզաբանումներ տրամադրված հաշվետվութ-յուններում, սկզբնական փաստաթղթերում ներկայացվող տեղեկատվության վերաբերյալ առաջացող հարցերի մասին:

2.4.4 Պատվիրատուն չի կարող աուդիտորական եզրակացությունը գնահատել որպես հարկային վճարումների միակ նախադրյալ և հարկային մուծումները կատարել միայն եզրակացության հիման վրա: Սույն պայմանագրի իրականացման շրջանակներում Կատարողը չի մատուցում հարկային կամ այլ պարտադիր վճարումների գծով խորհրդատվություն:

2.4.5 Աջակցել Կատարողին անհրաժեշտության դեպքում աուդիտորական աշխատանքների անցկացման ընթացքում երրորդ կողմի գրավոր կամ բանավոր հարցում կատարելու:

2.4.6 Հաշվապահական ձևակերպումներում և ֆինանսական հաշվետվություններում աուդիտորական եզրակացության հիման վրա ուղղումներ և ճշտումներ կատարել:

2.4.7 Պատվիրատուն պարտավորվում է մասնակիորեն (ընտրանքային կարգով) չհրապարակել Աուդիտորական եզրակացությունը՝ առանց աուդիտորի գրավոր համաձայնության, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

## 3 Ծառայության արժեքն ու վճարման կարգը

3.1 Պայմանագրով նախատեսված ծառայությունների արժեքը որոշվում է կողմերի համաձայնությամբ, այն կազմում է **780 000 (յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ՝** ներառյալ ԱԱՀ: Պայմանագրով նախատեսված ծառայությունների արժեքը որոշվել է, որ ծառայությունը մատուցվելու է Պատվիրատուի գրասենյակում:

3.2 Եթե Կատարողն իրականացնում է սույն պայմանագրում նշված աշխատանքներից բացի լրացուցիչ աշխատանքներ, ապա այդ աշխատանքների դիմաց Կատարողին փոխհամաձայնեցված կարգով լրացուցիչ վճարում է կատարվում Պատվիրատուի կողմից՝ լրացուցիչ աշխատանքով պայմանավորված ծախսերը հաստատող փաստաթղթերի և հաշվարկների հիման վրա:

3.3 Եթե աշխատանքները կատարվում են Պատվիրատուի աշխատանքի վայրերից (վարչական գրասենյակներից) դուրս, Պատվիրատուն պարտավորվում է նաև փոխհամաձայնեցված կարգով փոխհատուցել Կատարողի աշխատանքի հետ կապված բոլոր ծախսերը՝ ներառյալ գործուղման ծախսերը, հեռախոսային խոսակցությունների, ֆաքսերի, փոստի ծախսերը:

3.4 Պատվիրատուն Կատարողին կարող է վճարել կանխավճար՝ ծառայությունների պայմանագրային արժեքի 50 % -ի չափով:

3.5 Ծառայությունների պայմանագրային արժեքի մնացած գումարը և պայմանագրային վերջնահաշվարկը Կատարողին է վճարվում հանձնման-ընդունման ակտը հաստատելուց հետո հինգ օրվա ընթացքում:

## 4 Աշխատանքի արդյունքն ու հանձնման – ընդունման կարգը

4.1 Սույն Պայմանագրի առարկան հանդիսացող աշխատանքների, ծառայությունների արդյունքով Կատարողը կազմում և Պատվիրատուին է ներկայացնում աուդիտորական եզրակացություն: Անհրաժեշտություն առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին կարող է ներկայացնել նաև Ղեկավարությանն ուղղված նամակ:

4.2 Ղեկավարությանն ուղղված նամակը Պատվիրատուի ղեկավարներին ու հիմնադիրներին հասցեագրված փաստաթուղթ է, որը պարունակում է սպառիչ տեղեկատվություն աուդիտի ընթացքի, ֆինանսական հաշվետվություններում թույլ տրված էական խախտումների, հաշվապահական հաշվառման վարման սահմանված կարգից շեղումների մասին և աուդիտի ընթացքում ստացված այլ տեղեկություններ, հանձնարարականներ և առաջարկություններ:

4.2.1 Ղեկավարությանն ուղղված նամակում պարունակվող տեղեկատվությունը հանդիսանում է առևտրային գաղտնիք և ենթակա չէ հրապարակման, երրորդ կողմի տրամադրման՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

4.3 Աուդիտորական եզրակացությունը իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթուղթ է Պատվիրատուի ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության մասին, որը պարունակում է Կատարողի հիմնավորված հետևությունը Պատվիրատուի ֆինանսական հաշվետվությունների բավարար չափով արժանահավատությունը հաստատելու (չհաստատելու) վերաբերյալ:

4.3.1 Աուդիտորական եզրակացությունը առևտրային գաղտնիք չպարունակող փաստաթուղթ է:

4.4 Պատվիրատուն պայմանագրային աշխատանքները համարում է ընդունած, իսկ Կատարողը՝ հանձնած, աշխատանքների հանձնման – ընդունման ակտի երկկողմ վավերացմամբ:

4.5 Կատարողի կողմից սույն Պայմանագրի 4.2 և 4.3 կետերով նախատեսված փաստաթղթերը Պատվիրատուին հանձնելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնման-ընդունման ակտը չվավերացնելու կամ հիմնավոր առարկություններ չներկայացնելու դեպքում Կատարողի աշխատանքները համարվում են ընդունված:

## 5 Կողմերի պատասխանատվությունն ու վեճերի լուծման կարգը

5.1 Կատարողը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից իր օրենսդրական պարտավորությունները չկատարելու, ինչպես նաև ոչ ճիշտ տեղեկատվություն ներկայացնելու հետևանքով Պատվիրատուի կրած վնասների համար:

5.2 Կատարողի պատասխանատվությունը սահմանափակվում է սույն պայմանագրով նշված ծառայությունների մատուցման ընթացքում Կատարողի անփութության կամ աուդիտորական անձնակազմի կողմից կանխամտածված գործողությունների արդյունքում Պատվիրատուին հասցրած վնասի չափով: Կատարողը ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրում ոչ Պատվիրատուի, ոչ էլ որևէ երրորդ կողմի նկատմամբ ապագա վնասների, ծախսերի և պատահարների համար (ներառյալ բացթողնված շահույթի կորուստը), անգամ եթե վերոհիշյալ իրադարձությունների գոյության մասին Կատարողը տեղյակ էր պահվել: Սույն պայմանագրի հետ կապված Կատարողի առավելագույն պատասխանատվությունը (անկախ գործունեության բնույթից, այլ պատճառներից) սահմանափակվում է ծառայությունների դիմաց Կատարողին վճարված գումարի 20 %-ի չափով:

5.3 Պատվիրատունը պարտավորվում է սույն պայմանագրով նշված ծառայությունների մատուցման շրջանակներում, Կատարողին ազատել նյութական կամ այլ պատասխանատվությունից՝ կապված հայցերի, կորուստների, ծախսերի և պարտավորությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ վճռված է, որ վերջիններս Կատարողի կողմից կանխամտածված գործողությունների ու անփութության հետևանքն են:

5.4 Աուդիտի իրականացման համար անհրաժեշտ է, որպեսզի բավարարվեն սույն պայմանագրի 2.4.1 հոդվածի բոլոր կետերի պահանջները: Հակառակ դեպքում Կատարողը կարող է միակողմանի դադարեցնել առաքելությունը կամ վերակազմել Աուդիտորական աշխատանքների իրականացման և հաշվետվությունների ներկայացման ժամանակացույցը: Պատվիրատուի կողմից անհրաժեշտ փաստաթղթեր Կատարողին ներկայացնելուց հրաժարվելու, Կատարողի վրա ճնշում գործադրելու, իր օբյեկտիվ կարծիքը փոխելու կամ գործունեություն ծավալելու այլ արգելքներ հանդիսանալու դեպքում Կատարողն իրավունք ունի խզել Պայմանագիրը՝ այդ մասին գրավոր հայտնելով Պատվիրատուին:

5.5 Պատվիրատուի կողմից փաստաթղթերը ոչ լրիվ ներկայացնելու, ինչպես նաև աղավաղված տվյալներ ներկայացնելու դեպքում Պատվիրատուն իրավասու չէ բողոքարկելու, իսկ Կատարողը պատասխանատվություն չի կրում աշխատանքի արդյունքների համար:

5.6 Աուդիտի ընթացքում ստացված, կազմված բոլոր աշխատանքային փաստաթղթերը՝ կապված աուդիտորական ստուգման, կոնսուլտացիաների, հարցումների, պարզաբանումների հետ, հանդիսանում են Կատարողի աշխատանքային փաստաթղթերը: Կատարողի աշխատանքային փաստաթղթերը առևտրային գաղտնիք պարունակող փաստաթղթեր են:

5.7 Կատարողի պատճառով սույն Պայմանագրի համաձայն աշխատանքները ժամանակին չկատարելու համար Պատվիրատուն կարող է հաշվարկել տույժ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար աշխատանքների պայմանագրային արժեքի 0.15 % -ի չափով:

5.8 Սույն Պայմանագրով նախատեսված վճարման պայմանների Պատվիրատուի կողմից խախտման համար Կատարողը կարող է հաշվարկել տույժ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար աշխատանքների պայմանագրային արժեքի 0.15 % -ի չափով:

5.9 Պայմանագրային պարտականությունների մասնակի կամ լրիվ չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա արդյունք է գործող օրենսդրությամբ որոշվող անհաղթահարելի ուժերի հետևանքի (Ֆորս- մաժոր):

## 6 Լրացուցիչ դրույթներ

6.1 Աուդիտորական եզրակացությունը ներկայացվում է հայերեն երկու բնօրինակից՝ մեկ օրինակ Պատվիրատուի և մեկ օրինակ Կատարողի համար: Ղեկավարությանն ուղղված

նամակը, այդպիսի անհրաժեշտություն առաջանալու դեպքում, ներկայացվում է հայերեն երկու բնօրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

6.2 Սույն Պայմանագրի իրականացման ընթացքում առաջացող բոլոր վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, որոնց ընթացքում համաձայնության չգալու դեպքում կողմերը կարող են դիմել դատարան:

6.3 Սույն Պայմանագրի բոլոր լրացումներն ու փոփոխությունները փաստացի ուժ կունենան միայն այն դեպքում, երբ ձևակերպված են գրավոր և երկկողմ հաստատված են:

6.4 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմ վավերացման պահից:

6.5 Սույն պայմանագիրը կազմված է 5 թերթից, միևնույն իրավաբանական ուժ ունեցող երկու հայերեն բնօրինակից՝ մեկական օրինակ կողմերի համար:

## Կողմերի իրավաբանական հասցեները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ | «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 50/12, 0027 | ՀՀ, ք. Երևան, Նուբարաշեն, փ10, տ. 6 |
| ՀՎՀՀ 01804548 | ՏԳՀ՝ ք. Երևան, Մյասնիկյան պող. 5/1 |
| Հ/Հ 11500682358300 | ՀՎՀՀ 00433357 |
| «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ում | Հ/h 115004674095 |
| | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ում |
| *Տնօրեն՝* | *Տնօրեն* |
| Կ.Տ. *Վ. Պետրոսյան* | Կ.Տ. *Մ. Պետրոսյան* |